ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 144

ք. Երևան 02.09.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն (ՀՎՀՀ՝ 05549561, գործունեության հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ ք.Արթիկ Ղարիբջանյան փողոց 39 տուն (այսուհետ՝ նաև Մասնակից)): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ»ՍՊԸ հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ- ԳՀԱՊՁԲ-24-23/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝

- «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է՝
- էլեկտրական՝ (V/Hz)230/50, սակայն նշված չէ ֆազերի քանակը, անրհաժեշտ է հստակեցնել ֆազերի քանակը:
- Ճնշումը (բար/ՄՊա)20-մինչև 160/2-առավելագույնը 16, իսկ հրավերում նախատեսված է առնվազն 145-150 ՄՊա:
- Հզորությունը (լ/ժ) մաքս. 600, իսկ հրավերով սահմանված է առնվազն 500-600լ/ժ, անրհաժեշտ է հստակեցնել ներքին շեմը:
- Էլեկտրաէներգիայի սպառում (կՎտ) 3, իսկ հրավերում նախատեսված է առնվազն 4-5 (կՎտ) շեմը:
- Մալուխի երկարությունը (մ) 5, իսկ հրավերում նախատեսված է առնվազն 30-40մ. շեմը
- Քաշը (առանց պարագաների) (կգ) 18.88, իսկ հրավերում նախատեսված է առնվազն 12-15կգ շեմը:
- Չափերը (L ×W×H) (մմ)404×461×968, իսկ հրավերում նախատեսված է առնվազն երկարություն՝ 350-400մմ, լայնք՝ 300-400մմ, բարձրություն՝ 500-600մմ, ոչ պակաս շեմը

Վերը նշվածը չափանիշներից բացի, նշված չէ հրավերով նախատեսված այլ չափանիշներ, Օրինակ նշված չէ՝ սարքի տեղափոխման համար նախատեսված՝ առնվազն երկու անիվների, ըստ բարձրության կառավարվող տելեսկոպիկ մետաղյա բռնիչի առկայություն, բարձր ճնշման ճկափողի տեղավորվումը՝ սարքի առջևի մասում փաթաթելու միջոցով, որն ամրացվում է առնվազն երկու ռետինե էլաստիկ գոտիներով, էլեկտրական լարի փաթաթման (տեղավորման) համար սարքին ամրացված կեռիկների առկայություն, պարագաների տեղավորման համար սարքի վրա գրպանի առկայություն և այլն:

Գնահատող հանձնաժողովը առաջարկեց Մասնակցին շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, որի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ« ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը չի համապատասխանում ապրանքի հրավերով պահանջվող տեկնիկական բնութագրին, մասնավորապես.

- մասնակցի ներկայացված տեխնիկական բնութագրում ապրանքի ճնշումը, քաշը չեն համապատասխանում հրավերով նախատեսվածին, ինչպես նաև «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի նշել հետևյալը.
- գերտաքացման, ջրի անբավարար քանակի, ատրճանակի փակման ժամանակ ավտոմատ անջատման հնարավորությունը,
- ջրագծից և ջրավազաններիցից ջուր օգտագործելու հնարավորությունը,

- Պաշտպանվածության աստիճանը - IPX5 (ջրից և փոշուց պաշտպանվածության աստիճան՝ համաձայն IEC 60529 միջազգային ստանդարտի):

ՈՒստի հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և ընթացակարգի հրավերի 8.10 կետերի պահանջները՝ եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար, հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, գնահատող հանձնաժողովի կողմից «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվեց:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ